ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 հուլիսի 2024թ. թիվ 461-Ա

Ռ.ՍԱՀԱԿՅԱՆԻՆ ԱԼԱՎԵՐԴԻ
ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 209-րդ հոդվածի, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2335-Ն որոշմամբ սահմանված կարգով, հիմք ընդունելով մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության գլխավոր մասնագետ Վաղարշակ Եղիազարյանի 24.07.2024թ. զեկուցագիրը՝

Ո ր ո շ ո ւ մ ե մ.

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի տեղակալի օգնական Ռուբեն Սահակյանին ս/թ հուլիսի 24-ին մեկ օրով գործուղել Ալավերդի՝ ՀՀ Լոռու մարզում տեղացած հորդառատ անձրևների հետևանքով տեղի ունեցած հեղեղումների առաջացրած արտակարգ իրավիճակից տուժած քաղաքացիների դիմումների ընդունման գործընթացը կանոնակարգելու համար:

2. Մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչությանը՝ սահմանված կարգով փոխհատուցել գործուղման հետ կապված ծախսերը՝ բացառությամբ ճանապարհածախսի:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

24/07/2024

X

ԱՐԱՄ ՂԱԶԱՐՅԱՆ

Ա.ՂԱԶԱՐՅԱՆ

2024թ. հուլիսի 24
ք.Վանաձոր